



Հաստատում եմ:

Խ. Արուսյանի անվան հայկական պետական
մանկավարժական համալսարանի ռեկտոր՝
պրոֆեսոր Ռուբեն Միրզախանյան

07.05.2021թ.

ԿԱՐԾԻՔ

**Պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցող
Հասմիկ Սամվելի Հովհաննիսյանի «Բյուզանդական X-XI դդ. պղնձե դրամները
և դրանց շրջանառությունը Հայաստանում»**

**(Է. 00.03 «Հնագիտություն» մասնագիտությամբ) պատմական գիտությունների
թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության վերաբերյալ**

2021 թ. մայիսի 7-ին տեղի ունեցավ Խ. Արուսյանի անվան ՀՊՄՀ Հայոց պատմության
ամբիոնի նիստը, որին մասնակցում էին ամբիոնի վարիչ, պատմ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր Ա.
Փիլիպոսյանը, պատմ. գիտ. դոկտորներ, պրոֆեսորներ Վ. Վիրաբյանը, Ս. Պողոսյանը, Խ.
Ստեփանյանը, պատմ.գիտ. թեկնածուներ, պրոֆեսորներ Է. Գևորգյանը, Ա. Հարությունյանը,
պատմ. գիտ. թեկնածուներ, դոցենտներ Է. Հովհաննիսյանը, Ֆ. Մայիլյանը, Ա. Եփրիկյանը, Է.
Մելքոնյանը, Մ. Եղյանը, Ս. Խաչատրյանը:

Քննարկվեց Հասմիկ Սամվելի Հովհաննիսյանի «Բյուզանդական X-XI դդ. պղնձե դրամները
և դրանց շրջանառությունը Հայաստանում» թեկնածուական ատենախոսությունը՝ պատմական
գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցելու համար:

Ելույթ ունեցան ատենախոսության գրախոսներ, պատմ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր Ա.
Փիլիպոսյանը, պատմ. գիտ. թեկնածու, պրոֆ. Ա. Հարությունյանը, պատմ. գիտ. թեկնածու,
դոցենտ Ս. Խաչատրյանը, ովքեր հրապարակեցին իրենց գրավոր կարծիքները:

Պատասխան ելույթով հանդես եկավ ատենախոս Հ. Հովհաննիսյանը:

Դաշտային հետազոտությունների արդյունքում ձեռք բերված անտիկ և միջնադարյան հնագիտական նյութերի մեջ, իրենց գիտական բացառիկ արժեքով և պատմամշակութային վերակազմությունների իրականացման համար ընձեռած կարևոր տեղեկատվությամբ ու հնարավորություններով հատկապես առանձնանում են դրամական գտածոներն ու գանձերը: Ուստի այս ոլորտում իրականացվող գիտական ուսումնասիրություններն առաջնային դեր ունեն կոնկրետ պատմական դրվագի և/կամ որոշակի ժամանակահատվածի գործընթացների հիմնավոր, հավաստի և համակողմանի մեկնաբանման գործում:

Այս առումով բացառություն չի կազմում նաև Հասմիկ Սամվելի Հովհաննիսյանի «Բյուզանդական X-XI դդ. պղնձե դրամները և դրանց շրջանառությունը Հայաստանում» խորագրով ատենախոսությունը, որը նվիրված է Բագրատունյաց թագավորության վերջին շրջանում միջնադարյան Հայաստանում գործածության մեջ գտնված մետաղական դրամներին և հատկապես բյուզանդական պղնձե օրինակներին:

Ատենախոսությունը կազմված է ներածությունից, ենթաբաժիններ ունեցող 3 գլուխներից, եզրակացություններից, գրականության ցանկից և հավելվածից, որը ներառում է հապավումների ցանկ, աղյուսակներ, լուսանկարների ցանկ ու լուսանկարների 48 աղյուսակեր: Ընհանուր շարադրանքը՝ A4 ֆորմատի 252 տպագրական էջ է:

Ներածության մեջ (էջ 4-17) քննության են առնված ատենախոսվող թեմայի արդիականությանը, նպատակին, գործնական նշանակությանը, հետազոտման մեթոդաբանությանն ու հրապարակին առկա մասնագիտական գրականության համառոտ տեսության հիմնախնդիրները: Անշուշտ թեման արդիական է ու կարևոր, քանի որ այս աշխատանքի շնորհիվ մասնագիտական ոլորտ է մտնում պատշաճ գիտական մակարդակով ներայացվող մեծաքանակ դրամագիտական նյութ, որն իրապես ընդլայնում է մեր պատկերացումները ժամանակի պատմամշակութային իրողությունների և, մասնավորապես, միջազգային դրամաշրջանառության մասին: Սա, իր հերթին, հիմնավոր կերպով ներկայացնում և հանրահռչակում է այն կարևոր դերը, որ ստանձնել էր Բագրատունյաց Հայաստանը տարածաշրջանի X-XI դդ. ռազմաքաղաքական, առևտրատնտեսական և ֆինանսական բազմաբնույթ գործընթացներում, ինչը՝ կարմիր թելի պես, որպես ատենախոսության հիմնական նպատակի կարևոր բաղկացուցիչ, պարբերաբար ի հայտ է գալիս շարադրանքի 3 գլուխների մեկնաբանություններում և եզրահանգումներում: Հեղինակը ներածության մեջ հիմնավորապես անդրադարձել է ինչպես գրավոր սկզբնաղբյուրներին (Լևոն Սարկավագ, Լիուտպրանդ

Կրեմոնացի, Ստեփանոս Տարոնացի-Ասողիկ, Սամվել Անեցի, Վարդան Արևելցի, Արիստակես Լաստիվերցի, Գրիգոր Մագիստրոս, Հովհաննես Սկիլիցես, Միքայել Պսելոս, Աննա Կոմնենոս, Նիզամ ալ-Մուլք, Յահյա Անտիոքացի և այլոք), այնպես էլ հրապարակին առկա լայնածավալ մասնագիտական գրականությանը (Ն. Ադոնց, Հ. Մանանդյան, Մ. Օրմանյան, Ն. Մառ, Լ. Մելիքսեթ-Բեկ, Հ. Օրբելի, Մ. Գելցեր, Շ. Դիլ, Պ. Խարանիս, Բ. Առաքելյան, Ա. Տեր-Ղևոնդյան, Հ. Բարթիկյան, Խ. Մուշեղյան, Կ. Բասմաջեան, Ն. Ակինեան և այլոք): Այս ամենի հիման վրա հեղինակը փորձել է նաև խմբավորել բյուզանդական դրամների մասին տարբեր ժամանակներում տարբեր հեղինակների ներկայացրած կարծիքները և դրանց համակարգված թեզերը ներկայացնել սեփական ընկալումների ուղիտարկումների համատեքստում:

Ատենախոսության I-ին գլուխը (էջ 18-73) կրում է «962-1092 թթ. թողարկված բյուզանդական պղնձե դրամները (դասակարգման, ժամանակագրության և վերագրման խնդիրների քննություն)» խորագիրը: Այստեղ հեղինակն անդրադարձել է Բյուզանդական կայսրության մեջ դրամաթողարկման համակարգում պղնձե դրամների խաղացած դերին ու նշանակությանը, նրանց պատկերագրական առանձնահատկություններին, ընդգծելով, որ այս փուլում ուսումնասիրության առարկա դրամները (անգամ ժառանգելով թեոֆիլոսյան օրինակների պատկերագրական հորինվածքային կառուցվածքը) նախորդներից էապես տարբերվում էին բովանդակային առումով: Հեղինակի աչքից չի վրիպել այն կարևոր հանգամանքը, որ պղնձե դրամներն ավելի հաճախ թողարկվել են հատկապես Բյուզանդական կայսրության լայնածավալ արշավանքների շրջանում և նախատեսված են եղել նաև բանակի համար, ինչի արդյունքում էլ դրանց մի զգալի մասը հայտնաբերվել է ասպատակված երկրների (այդ թվում նաև Հայաստանի) տարածքներում: Այս գլխում ատենախոսության հեղինակն անդրադառնում է նաև անանուն ֆոլիսների թողարկման դրդապատճառներին ու սկզբնավորմանը X դ. վերջում: Ներկայացնում է Մակեդոնական հարստության ժամանակներում տարածված այս դրամների հանդես գալու քաղաքական, տնտեսական, ֆինանսական և, անգամ, քաջային փոփոխությունների հիմնավորումների համապատկերը: Հատկանշական է, որ այս գլխում հեղինակը շատ մանրամասն ու հիմնավոր իրականացրել է նաև անանուն (A-F, G-K) և կասեր անվամբ ֆոլիսների դասակարգում և տիպաբանություն, հատուկ անդրադառնալով յուրաքանչյուր դասում խմբավորված դրամների առանձնահատկություններին:

Ատենախոսության II գլուխը (էջ 74-128) ներկայացված է «X-XI դդ. թողարկված բյուզանդական դրամների պատկերագրական վերլուծություն» վերնագրով: Այն հիմնականում

նվիրված է ֆոլիաների պատկերագրության հորինվածքային սկզբունքների ձևավորմանը, ինչպես նաև այդ սկզբունքների վրա ազդեցություն գործած հնարավոր գործոններին ու շարժառիթներին: Պատկերագրության հարցերը քննարկելիս, պղնձե դրամներից զատ, հեղինակն անդրադարձել է նաև ժամանակի բյուզանդական ոսկե և արծաթե դրամների պատկերագրական խնդիրների վերլուծությանը: Պարզվում է, որ 969-1081 թթ. ընթացքում թողարկված ոսկե հիստամենոնների և պղնձե ֆոլոսենների դիմերեսին, որպես կանոն, պատկերվել է Քրիստոսը, և միակ բացառությունը դա Ջոե և Թեոդորա քույր-թագուհիների կարճատև կառավարման շրջանում է, երբ նշված դրամների դիմերեսին Քրիստոսին փոխարինել է Աստվածամայրը: Հետաքրքիր է, որ արծաթե միլիարեսիոնների վրա հիմնականում պատկերված է Աստվածամայրը և միայն Իսահակ I-ի օրոք դրանց դիմերեսին Աստվածամորը փոխարինում է Քրիստոսը:

Ատենախոսության այս գլխում հեղինակը մանրամասն անդրադառնում է Բյուզանդական գահին այս շրջանում հաջորդաբար բազմած տիրակալներ Հովհաննես I-ի (969-976 թթ.), Վասիլ II-ի (976-1025 թթ.), Կոնստանտին VIII-ի (1025-1028 թթ.), Ռոմանոս III-ի (1028-1034 թթ.), Միքայել IV-ի (1034-1041 թթ.), Միքայել V-ի (1041 թ.), Ջոե և Թեոդորա թագուհիների (1042 թ.), Կոնստանտին IX-ի (1042-1055 թթ.), Թեոդորա թագուհու (1055-1056 թթ.), Միքայել VI-ի (1056-1057 թթ.), Իսահակ I-ի (1057-1059 թթ.), Կոնստանտին X Դուկասի (1059-1067 թթ.), Եվդոկիայի (1067 թ.), Ռոմանոս IV-ի (1068-1071 թթ.), Միքայել VII-ի (1071-1078 թթ.), Նիկեֆորոս III-ի (1078-1081 թթ.), Նիկեֆորոս Բրիենիոսի և Նիկեֆորոս Բասիլակոսի (1077-1078 թթ.), Ալեքսիոս I-ի (1081-1118 թթ.) դրամներն ու դրանց պատկերագրության մանրամասներին:

Ատենախոսության III գլուխը (էջ 129-180) կրում է «Բյուզանդական X-XI դդ. թողարկած ֆոլիաների Հայաստան ներթափանցումը և վերաշրջանառությունը XII դարում և XIII-ի սկզբին» վերնագիրը: Այն ներկայացնում է դեպի Հայաստան բյուզանդական դրամների ներթափանցման ուղիները և տեղում բավական երկար (մինչև XIII դ. սկզբները) շրջանառության պատճառները: Գլուխը բաժանված է երեք ենթաբաժինների, որոնցից առաջինում քննարկվում են ՀՀ տարածքում, Անի մայրաքաղաքում հայտնաբերված և 969-1092 թթ. վերաբերող դրամական գտածոները: Դրանց ճնշող մեծամասնությունը (շուրջ 2000 դրամներ) հայտնաբերվել են Անիում, Ն. Մառի կողմից տեղում իրականացված պեղումների արդյունքում:

Հաջորդ երկու ենթաբաժիններում ատենախոսը քննության է առնում դրանց ներթափանցումը Հայաստան, հենց թողարկման շրջանում՝ X-XI դդ. և շրջանառությունը տեղում սելջուկյան իշխանությունների կողմից՝ XII-XIII դարերում (մինչև մոնղոլական արշավանքների

սկիզբը): Հեղինակի կարծիքով բյուզանդական դրամների ներհոսքը Հայաստան պետք է կապել X-XI դդ. Մերձավոր Արևելքում կայսրության ծավալած լայնածավալ նվաճողական գործողությունների հետ, որի արդյունքում նրա մարտական ստորաբաժանումները հաճախակի հայտնվում էին նաև Հայաստանում: Դրա փաստացի դրսևորումներն էին Մելիտենե-Մալաթիայի (934 թ.), Կարինի (949 թ.), Տարոնի (966 թ.), Մանազկերտի (969 թ.), Տայքի (1000 թ.), Վասպուրականի (1021 թ.), Անիի (1045 թ.) և Կարսի (1065 թ.) գրավումները բյուզանդական զորքերի կողմից: Ինչ վերաբերում է սելջուկյան տիրապետության շրջանում Հայաստանում շրջանառության մեջ մնացած բյուզանդական դրամներին (այդ թվում նաև պղնձե օրինակներին), ապա հեղինակը դա կապում է սելջուկյան դրամների նվազ քանակության և տվյալ պահին դրանք ինչ-որ կերպ համալրելու անհրաժեշտությամբ: Հեղինակը միանգամայն ճիշտ է, երբ անդրադառնալով Սելջուկյան սուլթանության XII դ., ռազմաքաղաքական և սոցիալտնտեսական իրավիճակին, նշում է, որ իշխանությունները պարտադրված էին նոր քայլեր իրականացնել (այդ թվում նաև դրամաշրջանառության ոլորտում) դրությունն ինչ-որ կերպ կայունացնելու և/կամ երկարաձգելու համար: Ինչի արդյունքներից մեկը՝ դրամական շրջանառության մեջ բյուզանդական ֆոլիսների վերաօգտագործումն էր, դրանց վրա ավելի փոքր կնիքով մակադրոշմ խփելու ճանապարհով: Այդպիսի դրամների մեծ քանակություն (շուրջ 13300 հատ) հայտնաբերվում է հատկապես պատմական Հայաստանի տարածքում:

Ատենախոսության վերջում՝ «Եզրակացություններ» մասում (էջ 181-185) ի մի են բերված աշխատանքի ներածության և երեք գլուխների մեջ առաջ քաշված քննարկումների ու գիտական մեկնաբանությունների ընդհանուր արդյունքները, որոնք ներկայացված են 14 կետերով:

Անշուշտ կատարվել է մանրակրկիտ, հիմնարար, քրտնաջան ու հույժ գիտական աշխատանք, որ միանշանակ արժանի է դրվատանքի: Այս առումով անհրաժեշտ ենք համարում հաջորդաբար թվարկել այն կարևոր ձեռքբերումները, որ փաստացի առկա են Հասմիկ Հովհաննիսյանի ատենախոսության շարադրանքում:

- Առաջին անգամ նման հիմնարար աշխատության մեջ մեկտեղված և հանգամանալի ուսումնասիրված է ՀՀ և Արևմտյան Հայաստանի տարածքներից հայտնաբերված բյուզանդական պղնձե դրամների սովորածավալ և հավաստի հավաքածու: Այն դասդասված և տիպաբանված է ոլորտին հարիր ամենաարդի մեթոդներով:

- Ատենախոսությունը գրված է անթերի հայերենով: Հնարավորինս ճիշտ, համապատասխան և մասնագիտական առումով խիստ կոռեկտ են ընտրված բոլոր տերմինները,

ձևակերպումներն ու բացատրությունները, ինչն առավել արժեքավոր է դարձնում նման բարդ աշխատանքը:

- Աշխատանքը արվել է օգտագործելով հրապարակի վրա առկա ողջ հայ և օտարալեզու մասնագիտական գրականությունը: Ատենախոսության մեջ կիրառվել է 46 անուն սկզբնաղբյուր և 408 անուն մենագրություն, հոդված ու հրապարակում՝ գրաբար, լատիներեն, հայերեն, ռուսերեն, անգլերեն գերմաներեն, ռումիներեն, բուլղարերեն, սերբերեն և թուրքերեն լեզուներով: Ըստ որում, գրականության գիտական ապարատն իրականացված է անթերի: Մանրամասը նշված են յուրաքանչյուր հրատարակության հեղինակը, վերնագիրը, վայրը, տարեթիվը, հրատարակչությունը և էջերի ընդհանուր քանակը:

- Շարադրանքը համալրված է անանուն ֆոլիոսների 11 համապարփակ աղյուսակներով և լուսանկարների 18 աղյուսակ-տախտակներով:

Միանշանակ շատ բարձր գնահատելով Հասմիկ Սամվելի Հովհաննիսյանի ատենախոսությունը, այսուհանդերձ կցանկանայինք անել մի քանի առաջարկություններ, որոնց դիտարկումն ու հնարավոր կիրառումը, մեր կարծիքով, ավելի շահեկան կդարձնե սույն ատենախոսությունը:

1. Ատենախոսությունը կազմելիս պետք է այնպես անել, որ յուրաքանչյուր աջ էջը սկսվի կենտ թվով: Դա ընդունված կարգ է ինչպես ատենախոսությունների, այնպես և հրատարակությունների համար: Տեքստում հանդիպող և այս կամ այն պատճառով բաց մնացած էջերը ևս համարակալվում են: Եթե հեղինակը հետևեր այս ընդունված կարգին՝ բովանդակության էջակալումներում և տեքստում անհամապատասխանություններ չէին լինի: Օրինակ. Բովանդակության մեջ նշված է, որ III գլուխը սկսվում է 130-րդ էջից, իսկ ատենախոսության մեջ այն սկսվում է 129-ից:

2. Մեկ անգամ ևս բարձր գնահատելով գիտական ապարատի հետ տարված աշխատանքը, նշենք, որ, այնուամենայնիվ, կան հեղինակներ ովքեր նշված են շարադրանքում, բայց տեղ չեն գտել գրականության ցանկում: Մասնավորապես խոսքը վերաբերում է Ս. Տեր-Ներսեսյանին, ում անունը կա ներածության մեջ՝ տողատակում (էջ 16), սակայն չի հանդիպում ամփոփիչ ցանկում:

3. Հեղինակը էջ 35-ում նշում է, որ 969-1092թթ. Բյուզանդիայում իշխել են 16 կայսր/կայսրուհիներ, սակայն էջ 74-120-ում նույն ժամանակահատվածի համար ներկայացնում է 18 կայսր/կայսրուհիների օրոք իրականացված դրամական բարեփոխումները:

4. Երկրորդ գլխում, թերևս, կարելի էր սահմանափակել բյուզանդական կայսրերի ու կայսրուհիների մասին տվյալների չափից դուրս մանրամասը շարադրանքը, ինչը հնարավորություն կտար հավելվածի որոշ նյութեր զետեղել հենց ատենախոսության այդ հատվածում, իսկ կենսագրական տվյալները կառաջարկեինք ներկայացնել ծանոթագրություններում:

5. Գտնում ենք, որ նման խորն ու բովանդակալից աշխատանքը շատ ավելի գիտական ու համոզիչ կներկայանար, եթե այն համալրված լիներ ժամանակն ու միջնադարյան դրամշրջանառությունն ակնառու ներկայցնող համապատասխան քարտեզներով:

Ներկայացված նկատառումները զուտ խորհրդատվական բնույթ ունեն և ոչնչով չեն ստվերում կամ նսեմասնում կատարված խորը և հիմնարար աշխատանքը: Այն լիովին համապատասխանում է թեկնածուական ատենախոսություններին ԲՈԿ-ի կողմից ներկայացվող պահանջներին: Ատենախոսության սեղմագիրը լիովին ներկայացնում է աշխատանքի ամփոփ և համառոտ շարադրանքը, իսկ նրանում ներառված հոդվածներն ամբողջությամբ առնչվում են խնդրո առարկա թեմային: Ուստի ատենախոս Հասմիկ Սամվելի Հովհաննիսյանը միանգամայն արժանի է հայցած պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանին:

Կարծիքը հաստատված է ամբիոնի 2021թ. մայիսի 12-ի նիստում /արձանագրություն թիվ 11/:

Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ Հայոց պատմության

ամբիոնի վարիչ



պրոֆ. Ա. Փիլիպոսյան

Պատմ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր Ա. Փիլիպոսյանի

ստորագրությունը հաստատում է:

ՀՊՄՀ գիտ. քարտուղար

դոց. Մ. Բսպիրյան

12.05.2021 թ.